ԵՐԿՈՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

"Արցախ-Հայաստան" հասարակական-քաղաքական կազմակերպության վարչությունն օրերս իր խոր զայրույթը հայտնեց ԱԺ ապրիլի 13-ի նիստում պատգամավոր Խաչիկ Սաֆարյանի, այսպես կոչված, հակաղարաբաղյան հայտարարության արթիվ: Բայց իրո՞ք հակաղարաբաղյան էր այն: Աննշան հապավումներով տպագրելով Խ. Սաֆարյանի ելույթը՝ մենք ցանկանում ենք, որ ընթերցողն այդ մասին ինքնուրույն տպավորություն քաղի:

Սիրելի հայրենակիցներ, մեզ պարտադրված պատերազմի ավերիչ թաթը տեղահանեց ձեզ ձեր չքնաղ բնօրրանից, և փախստական-բռնագաղթյալ դարձած՝ դուք ցրվեցիք աշխարհով մեկ: Այսօր, երբ մենք շահել ենք ճակատամարտը և Արցախն ազատագրված է, ոչ մի հիմք չկա օտար ափերում և նույնիսկ Հայաստանի Հանրապետության տարածքում դեգերելու, նոր տունտեղ դնելու, երբ ձեր շեն ու բարեկարգ գյուղերը, թավ ու մրգաշատ անտառները, բարեբեր հողերը, զովասուն սարերը, գլգլան ջրերը, ձեր հազարամյա փառահեղ վանքերն ու բերդերը, ձեր նախնյաց սուրբ աճյունները ձեզ են սպասում: Հայրենիքը մայր է, որին լքել չի կարելի, դա սրբապղծություն է, անգամ դավաճանություն: Ձեզ կանչում է ոչ թե ինչ-որ մեկը, այլ ձեր նախնիների և որդոց արյունով հեղված սրբազան հողը:

Արցախ՝ ձեր հայրենի օջախները չվերադառնալով՝ դուք կրկին հանձնում եք ձեր հայրենի հողը թուրքին: Առանց իր հող ու ջրին ամուր կառչած արցախցու՝ այդ չքնաղ բնաշխարհին էլ է սպասում Նախիջևանի տխուր ճակատագիրը: Ամեն ինչ այսօր ձեզնից է կախված, զինվորը պատվով կատարել է իր գործը, մնում է՝ դուք կատարեք ձեր պարտքը ձեր հողի հանդեպ և դառնաք տուն: Չէ որ այսօր արցախում հազար անգամ հեշտ է ապրելը, քան Հայաստանի Հանրապետության ցանկացած մասում: Հայաստանը բոլորիս ընդհանուր տունն է, բայց Արցախը ձեր անփոխարինելի տունն է: Ետ դարձեք ձեր տունը, վայելեք Աստծուց պարգևած ձեր աշխարհի բնական բարիքները, առավել շենացրեք ձեր տունը՝ ի հեճուկս մեր բոլոր թշնամիների:

Ես սասունցի եմ: Ու որքան զարմանալի կլիներ, եթե այսօր ազատագրված լիներ Սասունը (մի օր անպայման կազատագրվի), ես Երևանում կամ օտար աշխարհի որևէ ծայրում ինձ համար տաքուկ անկյուն կորոնեի՞՝ "շաքարը թողնելով շան բերանում": Դուք ինձանից և բոլոր արևմտահայերից ամենաերջանիկն եք, չէ որ ազատագրված է ձեր հողը, բաց է ձեր տան ճամփան, և նույնիսկ պետականորեն հովանավորվում է ձեր վերադարձը: Մի՞թե դուք չեք կարոտում ձեր տունն ու տեղը, ձեր հանդն ու սարը: Միթե այդքան կարճ է ձեր հիշողությունը, թե ինչպես ձեզ հանեցին՝ ձեր տնից, ինչպես դուք դարձաք փախստական և թափառական: Դարձեք տուն և ապացուցեք աշխարհին, որ դուք փախստական չեք, դուք բռնության զոհեր եք միայն: Եվ տուն դառնալով՝ դուք մեկընդմիշտ կթոթափեք այդ անպատվաբեր, վախկոտին, թույլին, անհայրենիք մարդուն վայել կարգավիճակը: Աղաչում եմ ձեզ, խղճացեք նաև ինձ և բոլոր արևմտահայերին, չէ որ Արցախը կրկին կորցնելուց հետո մեկընդմիշտ մարելու է մեր հարազատ տուն վերադառնալու հույսը, որ մենք այնպես խնամքով փայփայում ենք արդեն շուրջ ինը տասնամյակ: Ինչու ձեր հարուստ բնաշխարհն ու տաք տունը և բնօրրանը փոխեցիք ժամանակավոր "տաք աթոռներով", դա արցախցուն պատիվ չի բերում: Տուն դարձեք, դուք սերունդների առջև պատասխանատու եք ձեր յուրաքանչյուր անխոհեմ քայլի համար:

Սիրելի հայրենակիցներ, մեր արցախահայ եղբայրներին օգնելու, փրկելու միակ ճանապարհն այսօր նրանց տունդարձին օժանդակելն է ամեն ինչով: Հանրակացարանները, հյուրանոցները և այլ ժամանակավոր կացարանները երբեք նրանց համար տուն չեն:

Եվ այն աշխատանքը, որով նրանցից քչերն են զբաղված, ըստ էության աշխատանք չէն: Ու այն օգնությունը, որ նրանք ստանում են զանազան կազմակերպություններից, իրականում օգնություն չէն: Նրանք Արցախում կգտնեն աշխատանք և ապահովություն հենց սեփական տանը: Ու այդ տունը իրենց է սպասում: Սիրելի հնուց երևանաբնակ արցախցիներ, երբ երեկ դուք ընդունում, օգնում և ամեն ինչ անում էիք ձեր բռնագաղթյալ հարազատների համար, բնական էր և խրախուսելի: Այսօր ձեր պարտքն է օգնել նրանց վերադարձին: Դա է ոչ միայն նրանց, այլ ողջ արցախահայության փրկության ուղին: Ու բռնագաղթյալներով զբաղվող պետական մարմինները՝ թե՛ Հայաստանի Հանրապետության, և թե՛ Արցախում, ավելի շատ դրանով պետք է զբաղվեն, քան նրանց առօրեական մանր ու մունր հոգսերը փարատելով:

Ես դիմում եմ նաև Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահին՝ իր հոգսերի հոգսը համարելու արցախահայությանը տուն վերադարձնելու խնդիրը, չէ որ ինչ լուծում էլ ստանա Արցախի հարցն ապագայում, Արցախը մերը կլինի անվերապահորեն և հավերժորեն, եթե այնտեղ ամեն թիզ հող իր արցախցի տերն ունենա:

Արցախցի իմ եղբայրներ: Ես այս տողերը գրում եմ ձեզ սրտի ցավով: Շեն ու մարդաշատ պահեցեք Արցախը, որ չփակվի ընդմիշտ Սասունի ճանապարհը: Շուտով նշելու ենք հայոց մեծ եղեռնի տարելիցը, և ես կուզենայի, որ համայն հայությունը, առանց սուգի և արցունքի, հպարտությամբ նշեր նաև ապրելու, Արցախն ազատագրելիս մեր դրսևորած կամքի ու քաջության հաղթանակը: Եվ դա դառնար տունդարձի սուրբ ազդակ բոլոր դրսում գտնվող արցախցիներին:

Խաչիկ ՍԱՖԱՐՅԱՆ
ԱԺ պատգամավոր